ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՀ ԳՄՍԳ ԹԻՄ-ԳՀԱՊՁԲ 19/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման նիստի

գ. Սարուխան **«28» «02» 2019թ.**
ժ 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Տ. Ֆթոյան
Հանձնաժողովի անդամներ Յու. Մնեյան, Ա. Զաքոյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ժ. Խաչատրյան

1. Գնահատող հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից <<Համլետ Զաքոյան>> ԱՁ-ի՝ և <<ԱՏԱՍՏ ՖՈՒԴ>> ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ տրամադրված եզրակացությունը, համաձայն որի <<ԱՏԱՍՏ ՖՈՒԴ>> ՍՊԸ-ի-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով՝ (յուրաքանչյուր չափաբաժնի մասով) ունեցել է իր կողմից ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսից ավելի՝ 2697(երկու հազար վեց հարյուր ինսունյոթ) ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություններ:

Ուստի հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդված 1-ին մասի 2-րդ ենթակետի և ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 44-րդ կետի դրույթները.

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա/ N 20-րդ, 31-րդ և 32-րդ չափաբաժիններով՝ մերժել <<ԱՏԱՍՏ ՖՈՒԴ>> ՍՊԸ-ի հայտը և այդ փաբաբաժիններով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝ հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակից՝ <<Համլետ Զաքոյան>> ԱՁ-ին:

բ/ քանի որ <<ԱՏԱՍՏ ՖՈՒԴ>> ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի իր ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, ապա այդ հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն՝ այդ մասնակցի տվյալները համապատասխան հիմքերով, պետք է գրավոր ուղարկի լիազոր մարմին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

գ/ ''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 43-րդ կետի 4-րդ մասի համաձայն՝ N 20-րդ, 31-րդ և 32-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից <<Համլետ Զաքոյան>> ԱՁ-ից պահանջել երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հրավերով և հայտով նախատեսված ապրանքի ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը և ապրանքի տեխնիկական բնութագրերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Գնահատող հանձնաժողովը որոշեց փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստ հրավիրել է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող հինգերորդ աշխատանքային օրը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Սարուխան, Ե. Չարենցի 3 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Նախագահ՝ _____ Տ. Ֆթոյան

Անդամներ՝ _____ Ս. Զաքոյան

_____ Յու. Մնեյան

Քարտուղար՝ _____ Ժ. Խաչատրյան